ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2022/37

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղ

Մասնակից՝ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ

Մասնակցությամբ՝

«Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղի ներկայացուցիչ՝ Ա. Մինասյանի,

«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Վ. Աստվածատրյանի, Ա. Անտոնյանի, Ա. Սողոյանի, Գ. Խաչվանքյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/04» գնանշման հարցման ընթացակարգ, գազի քրոմատոգրաֆի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/04»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 27.01.2022թ.-ի թիվ 26/26-1/1434-2022 գրությամբ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 20.01.2022թ.-ի թիվ 04 գրության հիման վրա, 27.01.2022թ.-ին «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 27.01.2022թ.-ին:

01.02.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/37 համարի ծածկագիրը:

10.02.2022թ.-ին, 18.02.2022թ.-ին և 28.02.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 18.02.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 28.02.2022թ.-ին:

2. <u>«Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղը 20.01.2022թ.-ին թիվ 04 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

««Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն, «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով, ներկայացնում ենք ԷԳՀԻ ՓԲԸ «էներգակարգաբերում» մասնաճյուղի և «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ի միջև 2019 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված ԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/04 «Գազի քրոմատագրաֆի-քրոմատագիր համալիրի մատակարարման» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցագիրը, դրա պաշտոնական հրապարակման համացանցային հղումը https://gnumner.am/website/images/original/%20%20_20220117_0001 .pdf և պայմանագրի լուսապատճենը:»:

3. <u>«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 01.02.2022թ.-ին գրությամբ դիմել է «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.01.2022թ.-ի թիվ 26/26-1/1434-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 04.02.2022թ.-ին ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«27.01.2022թ.-ի թիվ 26/26-1/1434-2022 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ:

Սույնով ներկայացնում ենք մեր կարծիքը «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացի և դրա հիմքերի վերաբերյալ:

Այսպիսով, Պատվիրատու ՀՀ ԷԳԻ ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղը Գազի քրոմատոգրաֆի-քրոմատագիր համալիրի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԷԿ-ԳՀԱՊՁԲ 19/04 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 10.12.2019թ.-ին «Կոնցեռն-էներգոմաշ» ՓԲԸ-ի և ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի միջև կնքված «Գազի քրոմատոգրաֆի-քրոմատագիր համալիրի մատակարարման պայմանագիրը (այսուհետ պայմանագիր) միակողմանի լուծելու մասին 10.12.2019թ. ծանուցման մեջ նշել է, որ 02.03.2020թ.-ին «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից մատակարարվել է 10.12.2019թ.-ին Գազի քրոմատոգրաֆի-քրոմատագիր համալիրի մատակարարման պայմանագրի N1 հավելվածով նշված ապրանքը, կատարել է կարգաբերման աշխատանքներ և պահանջել է ընդունել ապրանքը, սակայն Պատվիրատու ՀՀ ԷԳԻ ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կողմից ընդունվել է միայն տրանսֆորմատորային յուղում իոնոլի չափումներին վերաբերվող 5 թերթերը և իոնոլի չափումների մեթոդիկան բաղկացած 12 թերթից, որոնք համապատասխանել են քրոմատագիր սարքի վրա կատարված չափումների մեթոդին, իսկ փաթեթի սևացած թերթերթը որպես ընդունամն-հանձնման փաստաթղթային հիմք չեն ընդունվել, քանի որ մեթոդիկաները չեն համապատասխանել կամ մասնակիորեն են համապատասխանել քրոմատագիր համալիրի վրա փաստացի կատարվող չափումներին, իսկ չափման արդյունքներն էլ չեն բավարարել Պայմանագրի N1 հավելվածի՝ Տեխնիկական-բնութագրի 2.1, 2.2, 2.5, 2.6 կետերի պահանջներին:

Նշվածի կապակցությամբ հայտնում ենք, որ Պայմանագրի շրջանակներում վաճառողը՝ «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ն իրականացրել է իր առջև դրված պայմանագրային պարտավորությունները մասնավորապես սարքավորման հանձնման, մոնտաժման, թողարկման-կարգաբերման, անձնակազմի ուսուցման աշխատանքները: 05.08.2021թ.-ին ՝«Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ն գրությամբ առաջարկել է Պատվիրատուին կազմել հանձնաժողով, հրավիրել անկախ փորձագետ մասնագիտացված գազային քրոմատագրման ոլորտում, ով կկարողանա տրամադրել եզրակացություն, թե որքանով է մատակարարը՝ «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ն, կատարել սարքավորման հանձնման, մոնտաժման, թոդարկման-կարգաբերման, անձնակազմի ուսուցման աշխատանքները:

Հաշվի առնելով, որ մասնագետ ներգրավելու հնարավորություն ՀՀ ԷԳԻ ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղը չի ունեցել, «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ն առաջարկել է իր միջոցների հաշվին դիմելու հանրապետությունում նման ծառայություն ունեցող կառույցներից մեկին, որոնցից ՀՀ ԷԳԻ ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղը

ընտրել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ին: Ընդ որում պայմանագրի առարկա Aligent 8860 GG System Գազի քրոմատոգրաֆի-քրոմատագիր համալիրի տրանսֆորմատորային յուղերում լուծվող գազերի ստանդարտ նմուշի սերտիֆիկատի պատճենի և նմուշների փորձարկումներին մասնակցել են և՝ ԷԳԻ ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղի ներկայացուցիչները, և «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ի ներկայացուցիչները: ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի 20.10.2021թ. ՍՀԱՄ-1447 գրությանը կից տրված եզրակացությամբ՝ սարքը լիովին համապատասխանում է տրանսֆորմատորային յուղերում լուծվող գազերի, ընդհանուր գազապարունակության և ջրի վերլուծության համար, սարքը նորմալ աշխատում է, իսկ արդյունքների վերարտադրելիության հակասական տվյալները կարող են առաջանալ տրանսֆորմատորային յուղերի նմուշապատրաստման փուլից: ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի 24.12.2021թ. ՍՀԱՄ-1824 գրությանը կից տրված մասնագիտական կարծիքի համաձայն՝ 2021թ.-ի դեկտեմբերի 17-ին ներկայացրած նոր վերլուծությունների (քրոմատագրերի) արդյունքների հիման վրա, տրանսֆորմատորային յուղերում՝ գազերի և ջրի ստացված արդյունքները պահպանում են իրենց վերարտադրելիությունը, անհրաժեշտ ճշտությունը, հայտնաբերման սահմանները և համապատասխանում են նորմատիվային փաստաթղթերի պահանջներին: Սարքը իր առջև դրված խնդիրները կատարում է ամբողջությամբ համաձայն վերլուծությունների: Ուստի, սարքի շահագործման հետ կապված որևէ խոչընդոտ առկա չէ:

Հետևաբար, Պատվիրատուի այն պնդումները, թե սարքը և մեթոդիկաները չեն համապատասխանում Պայմանագրով նշված տեխնիկական բնութագրի պահանջներին, Պատվիրատուի անհիմն դատողություններն են ու որևէ աղերս չունեն իրականության հետ:

Բացի այս, Պայմանագրի 5.3. կետի համաձայն՝ Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձման-ընդունման արձանագրությունը և դրա չափագրման հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և

Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Հարկ է նկատել, որ վերոգրյալ կետի իմաստով, եթե ԷԳՀԻ ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղը գտներ, որ ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պայմանագրի 5.3. կետով սահմանված կարգով կվերադարձներ հանձման-ընդունման արձանագրությունը, դրա չստորագրման հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը և այդ մասին վաճառողին կտեղեկացներ armeps համակարգի միջոցով, ինչը չի կատարվել, և ինչն էլ իր հերթին նշանակում է, որ իրականում ապրանքը համապատասխանել է պայմանագրային պայմաններին: Ապրանքի մատակարարված և հանձնված լինելը հավաստվում է նաև Գնորդի՝ ԷԳՀԻ ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղ կողմից հարկային հաշիվը ստորագրած լինելու փաստով:

Ավելին, Պայմանագրի 3.3. կետի համաձայն՝ գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Հաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:...

Պայմանագրի հավելված N 2-ի համաձայն՝ ապրանքի վճարումը պետք է իրականացվեր ապրանքի մատակարարման օրվանից վեց ամսում:

Այսպիսով, ապրանքը մատակարավել է Գնորդին 02.03.2020թ.-ին, սակայն մինչ օրս գնորդի ՀՀ ԷԳԻ ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կողմից որևէ դրամ չի վճարվել Վաճառողին «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ին:

Ավելին, Գնորդը, չկատարելով իր պայմանագրային պարտավորությունները, դեռ փորձում է պատասխանատվության ենթարկել Վաճառողին և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ծանուցել է ՀՀ ֆինանսների նախարարությանը, այն պարագայում, երբ «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ն հանդիսանում է բժշկական, լաբորատոր և անալիտիկ սարքավորումներ ներմուծող և վաճառք իրականացնող առաջատար ընկերությունը Հայաստանում, մասնակորապես.՝

> Ընկերությունը 2005թ-ից ի վեր իրականացնում է նշված սարքերի և սարքավորումների տեղադրման, կարգաբերման, պատվիրատուի անձնակազմի համալիր

ուսուցման աշխատանքներ, ինչպես նաև իրականացնում է երաշխիքային և եր երաշխիքային սպասարկում:

Ընկերության աշխատակազմը մասնակորապես բժշկական, լաբորատոր և անալիտիկ սարքերի ներկայացուցիչները, ինժեներները անցնում են ամենամյա վերապատրաստումներ՝ սարքերը արտադրող ընկերություններում, և ունեն համապատասխան բարձր որակավորումներ:

Ընկերությունը ունի բազմամյա տարիների փորձ պատվիրատուների կողմից կսպմակեպված գնման ընթացակարգերի մասնակցության մեջ, իրականացնելով պատշաճ ապրանքների մատակարարում և ծառայությունների մատուցում:

Ընկերությունը գնման ընթացակարգերի շրջանակներում մատակարարել է անալիտիկ սարքեր մի շարք կենտրոններում, այդ թվում Դատաբժշկական գիտագործնական կենտրոն ՊՈԱԿ-ում, Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին ՓԲԸ-ում, Փորձաքննությունների ազգային բյուրո ՊՈԱԿ-ում, Երևանի պետական բժշկական համալսարանում, Երևանի պետական համալսարանում, Շրջակա միջավայրի մոնիտորինգի կենտրոնում, Ա.Բ. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտում, Ագրարային համալսարանում, ՀՀ ԱՆ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնում, ՀՀ Պաշտպանության նախարարությունում, «հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ- ում (ՀԱԷԿ) և մի շարք այլ կենտրոններում:

Մատակարարման պայմանագրերի շրջանակներում իրականացրել է մաասակարարումներ Երևանի կոնյակի գործարանում, Պռոշյանի կոնյակի գործարանում, Զանգեզուրի պղնձամոլիբդենային գործարանում, Արփիմեդ դեղագործական ընկերությունում, Լիկվոր դեղագործական ընկերությունում, «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ում, «Կոնտուր Գլոբալ հիդրո Կասկադ» ՓԲԸ-ում, և մի շարք այլ խոշորագույն կազմակերպություններում:

Ի լրումն նշենք, որ ընկերությունը տարեկան կտրվածքով մասնակցում է ավելի քան թվով 450 գնման ընթացակարգերի, և մինչև այժմ վայելում է Պատվիրատուների և Գնորդների վստահությունն ու հարգանքը իր բարձր պրոֆեսիոնալիզմի, ազնվության և բարեխղճության շնորհիվ: Ինչպես նաև տարիների ընթացքում վերահաստատում, որ հանդիսանում է հուսալի և պարտաճանաչ ներկրող Հայաստանում:

Այսպիսով, «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ն ամբողջապես կատարել է Գազի քրոմատոգրաֆի-քրոմատագիր համալիրի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/04 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 10.12.2019թ.-ին «Կոնցեռն-

էներգոմաշ» ՓԲԸ-ի և ԷԳՀԻ ՓԲԸ «էներգակարգաբերում» մասնաճյուղի միջև կնքված «Գազի քրոմատոգրաֆի-քրոմատագիր համալիրի մատակարարման պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները,

իսկ

ՀՀ ԷԳԻ ՓԲԸ-ի «էներգակարգաբերում» մասնաճյուղը չի կատարել իր պայմանագրային պարտավորությունները՝ այդ թվում վճարային պարտավորությունները, և շուրջ 2 (երկու) տարի այդ պարտավորությունները կատարելուց խուսափելուց հետո, որպեսզի շարունակի խուսափել իր վճարային պարտավորությունները կատարելուց որպես հերթական քայլ ձեռնարկել է այս գործընթացը՝ փորձելով «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ին շեղել իր մատակարարած ապրանքի դիմաց վճարներն ու տույժերը պահանջելուց:

Հարկ է նկատել, որ Կոնցեռ էներգոմաշ ՓԲԸ-ն արդեն նախաձեռնում է նաև դատական գործընթաց ընդդեմ «էներգակարգաբերում» մասնաճյուղի՝ իր պայմանագրային պարտավորությունները կատարել պարտավորեցնելու և պայմանագրի գումարը բռնագանձելու պահանջներով:»:

Վերոգրյալից ելնելով՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է մերժել ՀՀ ԷԳԻ ՓԲԸ-ի «էներգակարգաբերում» մասնաճյուղի պահանջը՝ «Կոնցեռն էներգոմաշ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով:

4. <u>ՍՑ-LO-2022/37 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղի և «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի միջև 10.12.2019թ.-ին կնքվել է թիվ «ԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/04» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝

Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման օրվանից մինչև 2019թ.-ի դեկտեմբերի 25-ը:

iv. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 18.01.2022թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծելու մասին 17.01.2022թ.-ի թիվ 02 համարի ծանուցման համաձայն՝ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի և ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի միջև 2019 թվականի դեկաեմբրի 10-ին կնքված «ԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/04» «Գազի քրոմատագրաֆի-քրոմատագիր համալիրի մատակարարման» պայմանագրի 1.1 կետով Ընկերությունը պարտավորվել է ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով Տեխնիկական-բնութագիր գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը: Ապրանքը մատակարարվել է 2020 թվականի մարտի 2-ին, առավելագույն թույլատրվածից 37 օր ուշացումով: Մինչև 2021 թվականի հուլիսի 21-ը (մատակարարումից 507 օր) Վաճառողը կատարել է կարգաբերման աշխատանքներ և այնուհետ պահանջել է ընդունել ապրանքը, ներկայացնելով երեք էջի վրա նամակ և կից 135 թերթից (232 էջ) բաղկացած տարաբնույթ տեխնիկական փաստաթղթերի փաթեթ, որոնցից 42 թերթը եղել են քրոմատագիր սարքի չափումների ելքային արդյունքները: Նշված փաթեթից ըստ դրանցում ընդգրկվածի, ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կողմից ընդունվել են միայն տրանսֆորմատորային յուղում իոնոլի չափումներին վերաբերվող 5 թերթը և իոնոլի չափումների մեթոդիկան բաղկացած 12 թերթից, որոնք իրականում համապատասխանել են քրոմատագիր սարքի վրա կատարված չափումների մեթոդին, իսկ արդյունքներն էլ եղել են կայուն և հավաստի: Փաթեթի մնացած թերթերը որպես ընդունման-հանձնման փաստաթղթային հիմք չի ընդունվել, քանի որ մեթոդիկաները չեն համապատասխանել կամ մասնակիորեն են համապատասխանել քրոմատագիր համալիրի վրա փաստացի կատարվող չափումներին, իսկ չափման արդյունքներն էլ չեն բավարարել Պայմանագրի N 1 հավելվածի Տեխնիկական-բնութագրի 2.1-2.3; 2.5; 2.6 կետերի պահանջներին:

2021 թվականի նոյեմբերի 17-ից մինչև դեկտեմբերի 16-ը Ընկերությունը կատարել է ավարտական վերլուծություններ: 2021 թվականի դեկտեմբերի 20-ին (մատակարարումից 659 օր) Ընկերությունը ներկայացրել է ամփոփիչ վերլուծությունների (չափումների)

արդյունքները տրանսֆորմատորային յուղերում բնութագրիչ գազերի մասով 55 հատ ընդհանուր կատարվածից 23 հատ ընտրված արձանագրություններ: Նշված 23 արձանագրություններում առկա են եղել 15 հատ հաշվարկային ալգորիթմների փոփոխություն, և բնականաբար այդ արդյունքները ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կողմից կրկնելի և վերարտադրելի չեն համարվել: Իսկ տրանսֆորմատորային յուղում ջրի քանակի չափումները ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կողմից չեն ընդունվել, որովհետև դրանցում առկա չեն եղել տրանսֆորմատորային յուղում ջրի իրական քանակի ցուցանիշները:

Ընդհանուր առմամբ ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղը գտնում է, որ ամփոփիչ ավարտական վերլուծությունների արդյունքները չեն բավարարում Պայմանագրի N 1 հավելվածի Տեխնիկական-բնութագրի 2.1.1, 2.2, 2.3, 2.5 և 2.6 կետերի պահանջներին, որոնց մասին առարկայորեն նշվել է ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կողմից Ընկերությանն ուղղված 2021 թվականի դեկտեմբերի 24-ի №1-10 և 2022 թվականի հունվարի 5-ի №01 նամակներով:

Քանի որ տեխնիկապես հնարավոր չէ կատարել ապրանքի մասնակի ընդունում միայն իոնոլի չափումների մասով՝ Պայմանագրի N 1 հավելվածի Տեխնիկական-բնութագրի 2.4 կետ, ապա ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղը Պայմանագիրը միակողմանի լուծում է ամբողջությամբ, Պայմանագրի 8.9 կետի համաձայն սույն ծանուցման հրապարակմամբ:

v. Պատվիրատուի և Մասնակցի կողմից 02.03.2020թ.-ին էլեկտրոնային թվային ստորագրությամբ կնքվել է ապրանքի մատակարարման թիվ Ա1749159977 համարի հաշիվ ապրանքագիրը, համաձայն որի՝ մատակարարվել և ապա ընդունվել է «գազի քրոմատոգրաֆ-քրոմատագիր համալիր Agilent 8860 GC System» անվամբ ապրանքը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.01.2022թ.-ի թիվ 26/26-1/1434-2022 գրությամբ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը

պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 110-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

1) պայմանագրի կամ դրա մի մասի ընդունման նպատակով պայմանագիր կնքած անձը դրանով սահմանված ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած

ներկայացուցիչն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին է տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն.

3) եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է՝

ա. դրական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատում և էլեկտրոնային համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է ուղարկում հանձնման-ընդունման արձանագրությունը և եզրակացությունը, որոնք վերջինս 1 աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով տրամադրում է պայմանագիր կնքած անձին,

բ. բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:

Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման օրվանից մինչև 2019թ.-ի դեկտեմբերի 25-ը:

Պայմանագրի 2-րդ բաժնի համաձայն՝

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Պայմանագրի 5-րդ բաժնի համաձայն՝

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է

տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղի և «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի միջև 10.12.2019թ.-ին կնքված թիվ «ԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/04» ծածկագրով պետական գնման Պայմանագրով Մասնակիցը պարտավորվել է ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղին մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով Տեխնիկական-բնութագիր գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը: Ապրանքը մատակարարվել է 2020 թվականի մարտի 2-ին, առավելագույն թույլատրվածից 37 օր ուշացումով: Մինչև 2021 թվականի հուլիսի 21-ը (մատակարարումից 507 օր) Վաճառողը կատարել է կարգաբերման աշխատանքներ: ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղը, գտնելով, որ ամփոփիչ ավարտական վերլուծությունների արդյունքները չեն բավարարում Պայմանագրի թիվ 1 հավելվածի Տեխնիկական-բնութագրի 2.1.1, 2.2, 2.3, 2.5 և 2.6 կետերի պահանջներին, Պայմանագիրը միակողմանի լուծել է ամբողջությամբ՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 18.01.2022թ.-ին հրապարակելով Պայմանագրի միակողմանի լուծելու մասին 17.01.2022թ.-ի թիվ 02 համարի ծանուցումը:

Պատվիրատուն ամփոփիչ ավարտական վերլուծությունների արդյունքների՝ Պայմանագրի թիվ 1 հավելվածի Տեխնիկական-բնութագրի 2.1.1, 2.2, 2.3, 2.5 և 2.6 կետերի պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ գրություններ է ուղղել Մասնակցին՝ 2021 թվականի դեկտեմբերի 24-ի №1-10 և 2022 թվականի հունվարի 5-ի №01 նամակներով:

Վերոգրյալ իրավական ու փաստական հանգամանքների հիման վրա, ուսումնասիրելով Պատվիրատուի և Մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշումները՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ գործով ձեռք չի բերվել որևէ վերաբերելի ապացույց առ այն, որ Պատվիրատուի կողմից պահպանվել է Պայմանագրի 5-րդ բաժնի դրույթներով սահմանված գործողությունները, մասնավորապես՝ Պայմանագրի 5.3 կետի հիման վրա, եթե Պատվիրատուն գտնում էր, որ մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետք է չստորագրեր հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում (10 աշխատանքային օրվա ընթացքում) էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ վերադարձներ հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:

Ընդ որում, հարկ է նկատել, որ Պայմանագրի 5.4 կետի համաձայն՝ եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված ...:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ սույն գործում առկա չէ Պատվիրատուի կողմից Կարգի 110-րդ կետի և Պայմանագրի 5-րդ բաժնի դրույթների պահպանմամբ կազմված և Մասնակցին տրամադրված բացասական եզրակացություն:

Այս փաստի առկայության պարագայում միայն հնարավոր կլիներ արձանագրել Մասնակցի կողմից Պայմանագրի 2.1.7-րդ կետերով ստանձնած պարտավորությունների խախտման փաստը և դրանով պայմանավորված՝ հետագայում էլ (սույն ընթացակարգի քննության ժամանակ) հնարավոր լիներ գնահատելու Պատվիրատուի գործողությունների օրինաչափությունը, և վերջապես գնահատելու Մասնակցի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտման փաստը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատոփ կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց

հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.01.2022թ.-ի թիվ 26/26-1/1434-2022 գրությամբ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/37 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**